Հաստատված է:

Երևանի Մ. Խորենացու անվան
Հ. 143 հիմնական դպրոցի
Տնօրեն՝ Կ. Կոստանյան

Մ.Խորենացու ԱՆՎԱՆ 143 հիմնական դպրոց

9Բ

Դասարանի դասղեկի աշխատանքային
2023-2024 ուստարի

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

9ա դասարանում սովորում են 24 աշակերտներ, որոնցից 15 -ը տղա են, 7 -ը՝ աղջիկ: Հաշվի առնելով տարիքային զարգացման առանձնահատկությունները՝ ակնհայտ է դառնում, որ մի շարք դժվարություններ են ի հայտ գալիս, որոնց լուծման համար անհրաժեշտ է լինել համբերատար, զգոն և հետևողական: Միջանձնային բախումներն անխուսափելի են այս տարիքային փուլում: Յուրաքանչյուրն իր հերթին փորձում է ինքնահաստատվել, որը առիթ է հանդիսանում վեճերի, ընդհարումների:

Իմ նպատակն է՝ աշխատել դասարանի բարձր առաջադիմության ուղղությամբ, ձևավորել կարգապահ, կազմակերպված, հանդուրժող, համերաշխ կոլեկտիվ, նպաստել աշակերտների ընդհանուր մտահորիզոնի ընդարձակմանը, աշխատել բարոյահոգեբանական կերտվածքի զարգացման ուղղությամբ, նպաստել քաղաքացիականության և ուսման նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ձևավորմանը, ձևաորել կոլեկտիվ, որտեղ բոլորը հարգում են մեկը մյուսի կարծիքը: Բոլոր աշակերտներն էլ յուրահատուկ են, բանիմաց, հետաքրքրասեր: Նրանցից յուրաքանչյուրն էլ ձգտում է մշտապես լինել ուշադրության կենտրոնում, միշտ լինել առաջինը, որն էլ հաճախ խնդիրների առաջացման պատճառ է հանդիսանում:

Աշակերտները հաճախում են նախասիրական պարապմունքների /լող, ֆուտբոլ, բասկետբոլ, բռնցքամարտ.../, հաճախում են երաժշտական դպրոցներ, պարի ստուդիաներ, մաթեմատիկական ունակությունների, տրամաբանության զարգացմանն ուղղված կենտրոններ, ինչպես նաև երգում՝ երգչախմբերում: Հատկանշական է, որ դասարանում ունենք աշակերտներ, ովքեր շախմատի առաջնություններում բազմաթիվ հաղթանակներ ունեն գրանցած և արդեն իսկ ստացել են առաջնային կարգեր:

Աշակերտական խորհրդի անդամներն են՝

1. Դիլոյան Մանե
2. Հովսեփյան Դավիթ
3. Ֆրինջյան Էլեն

Ծնողական ժողովներ

1-ին ժողովում՝ 01.09. – 15.09.2023թ

- Ծնողական կոմիտեի ընտրություններ
- Ծնողների խնդիրները, աջակցությունը ուսումնադաստիարակչական աշխատանքում
- Աշակերտների օրվա ռեժիմի և կազմակերպչական, կարգապահական այլ հարցերի մասին

2-րդ ժողովում՝ 27.10 – 31.10.2023թ. և 23.03 – 27.03.2023թ.

Ծնող-հանդիպում յուրաքանչյուր կիսամյակի միջանկյալ հատվածում

- Լսել դասավանդող ուսուցիչներին, ներկայացնել առաջադիմության ապահովման համար անհրաժեշտ նախադրյալները:
- Դպրոցի և ընտանիքի միասնական պահանջների ներկայացնելը աշակերտների ճիշտ դաստիարակության հիմքն է:

3-րդ ժողովում՝ 26.12 – 30.12.2023թ.

Կիսամյակի ամփոփում

- Առաջին կիսամյակի առաջադիմության արդյունքները
- Ընթացիկ հարցեր, անհրաժեշտության դեպքում անցկացնել բազմաբովանդակ զրույցներ: Ուշադրության արժանացնել ծնողների խնդիրները:

4-րդ ժողովում՝ 25.05. -29.05.2024թ.

Կիսամյակի ամփոփում

- Ծնողական ակտիվին ներգրավվել աշակերտների հետ տարվող աշխատանքում: Օգնություն ցույց տալ ծնողական կոմիտեին
- Ծնողների միջոցով աշակերտների հետ տարաբնույթ թեմաներով զրույցների անցկացում: դաստիարակչական ճանաչողական էքսկուրսիաների անցկացում ծնողների մասնակցությամբ
- Ծնողներին մասնակից դարձնելու ուսումնադաստիարակչական աշխատանքներին
- Ապահովել աշակերտ-ծնող-ուսուցիչ կապը
- Անցկացնել անհատական զրույցներ:

Զրույցներ ծնողների հետ

1. Ամեն ինչ դպրոցականի ռեժիմի մասին
2. Ընտանիքի դերը աշակերտի հետաքրքրությունների ձևավորման գործում
3. Ուսման նկատմամբ սովորողի հետաքրքրությունը
4. Ծնողների խնդիրները ուսումնադաստիարակչական աշխատանքներում
5. Դեռահասության առանձնահատկությունները
6. Անձի ինքնահաստատում և անհատականության ձևավորում, կերտում
7. Աշակերտների հիգիենայի մասին
8. Գնահատման համակարգը և կարևորությունը: Գնահատումը՝ որպես մոտիվացիա դարձնելու գաղափարի դրական և բացասական կողմերը
9. Ապահով համացանց
10. Դպրոցի և ընտանիքի կողմից միասնական պահանջներ ներկայացնելը աշակերտների ճիշտ դաստիարակության հիմքն է:

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝ Հոսեփյան Աստղիկ

Օգնականներ՝ 1. Ֆրինջյան Հասմիկ
2. Հակոբյան Ագապի

Ուսումնադաստիարակչական նախատեսված աշխատանքները ուսումնական տարվա ընթացքում

1. Կահավորել և ձևավորել դասասենյակը:
2. Հետևել դասասենյակի և շրջապատի մաքրությանը, դասարանում սահմանել հերթապահություն:
3. Տեղեկացնել աշակերտներին ուղեցույցի մասին՝ համաճարակային կանոնների ապահովման համար

4. Ուշադրություն դարձնել աշակերտների արտահագուստին:
5. Ստեղծել ներկոլեկտիվային ինքնավարության մարմիններ՝ դասարանի խորհրդի նախագահ, հերթապահներ, ընտրել խորհրդիկազմը: Պայմաններ ստեղծել ինքնավարության մեջ սովորողների հանձնարարությունների պլանաչափ հերթափոխման համար, որպեսզի կատարողականությունն ու ղեկավարման կարողությունը ձևավորվեն միասնության մեջ:
6. Աշխատանք տանել աշակերտների ուսման առաջադիմության բարձրացման ուղղությամբ և հաստատել գիտակցական կարգապահություն
7. Սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ: Ձևավորել սեր աշխատանքի նկատմամբ, դաստիարակել բարոյական և հոգևոր արժեքներ, պատասխանատու վերաբերմունք և աշխարհայացք:
8. Ապահովել աշակերտ-դպրոց-ծնող սերտ կապը: Նպաստել դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ:Սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ, կապ պահպանել գրադարանի հետ:
9. Ակտիվորեն մասնակցել աշակերտական խորհրդի աշխատանքներին:
10. Անհրաժեշտության դեպքում օգնել և աջակցել դժվարություններ ունեցող աշակերտներին:
11. Ստեղծել փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ:
12. Ձևավորել համերաշխ աշակերտական կոլեկտիվ:
13. Աշխատանք տանել հաճախակի ուշացող և բացակա աշակերտների հետ: Հնարավորինս հասնել այդ երևույթի վերացմանը:
14. Ուշադրություն դարձնել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին:
15. Ակտիվորեն մասնակցել դպրոցի հասարակական աշխատանքներին:
16. Կազմակերպել ուսումնադաստիարակչական, գիտաճանաչողական, ժամանցային էքսկուրսիաներ:
17. Մանկավարժական պրոցեսն ուղղել դպրոցականների համակողմանի զարգացմանը:
18. Կազմակերպել, կոորդինացնել դաստիարակչական բոլոր ազդեցությունները, իրագործել դաստիարակչական աշխատանքի նկատմամբ կոմպլեքսային մոտեցում:
19. Դաստիարակչական աշխատանք կատարել դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ:
20. Կազմակերպել սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ/արտակարգ իրավիճակի ժամանակահատվածում հեռահար հարթակում/
21. Վարել սահմանված փաստաթղթային աշխատանքներ
22. Տեղեկություններ հաղորդել դպրոցի ղեկավարությանը աշակերտների առաջադիմության, հաճախման և վարքի մասին: Գործունեությունը համաձայնեցնել դպրոցական աշխատանքի մյուս բոլոր օղակների հետ՝ կողմնորոշվելով համադպրոցական տարեկան պլանով:

23. Կազմակերպել դպրոցականների պրակտիկ գործունեությունը տարբեր ձևերի ու մեթոդների նպատակահարմար զուգակցմամբ:

24. Ուսումնասիրել դպրոցականներին բնական պայմաններում, նրա կենսագործունեության պայմանների հետ միասնության մեջ/իրականացնել սովորողների հոգեբանամանկավարժական հետազոտում, հաշվի առնել անհատական զարգացման առանձնահատկությունները, ուժեղ և թույլ կողմերը, ընդունակությունները/:

25. Մշտապես հաշվի առնել սովորողների անհատական և տարիքային առանձնահատկությունները: Ծանոթանալ ընտանիքում առկա այն խնդիրների հետ, որոնք ազդում են սովորողի հոգեբանական վիճակի վրա և խոչնդոտում են ուսումնական գործընթացը:

26. Ծնողների հետ սահմանել վստահելի ու գործնական հարաբերություններ: Իրականացնել բարոյահրավական գիտակցության ձևավորման ուղղությամբ տարվող միջոցառումների համակարգ/էթիկական ու իրավական զրույցներ լավագույն մարդկանց մասին հանդիպումներ, բանավեճեր, կինոդիտումներ ու քննարկումներ, ցուցափեղկերի ու անկյունների ձևավորում/:

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Պահել ծնող-ուսուցիչ կապը:
- Հետևել դասասենյակի մաքրությանը:
- Սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ:
- Ուշադրություն դարձնել աշխատանքային դաստիարակությանը:
- Ակտիվորեն մասնակցել աշակերտական խորհրդի աշխատանքներին:
- Սերտ կապ պահել ուսուցման դժվարություններ ունեցող աշակերտների ծնողների հետ:
- Հետևել դասագրքերի պահպանմանը:
- Կազմակերպել երեխաների առողջության պահպանման հետ կապված բժշկական երաշխավորությունների կատարումը:
- Անցկացնել ծնողական ժողովներ և պլանավորված զրույցներ:
- Հետևողական աշխատանք տանել ուսման առաջադիմության բարձրացման նպատակով:
- Կազմակերպել էքսկուրսիաներ ՀՀ պատմամշակութային օջախներ/արտակարգ իրավիճակի դադարեցման դեպքում/
- Անցկացնել դաստիարակչական թեստեր և կազմակերպել բանավեճեր աշակերտներին հուզող թեմաներով:

- Աշխատանք տանել, որ աշակերտները մասնակցեն արտադասարանական միջոցառումներին:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Կատարել աշակերտների հաճախումների հաշվառում:
- Հետևել աշակերտների արտաքին տեսքին:
- Հետևել աշակերտների անձնական հիգիենային:
- Հետևել աշակերտների սնվելուն ու բարեկիրթ վարքին՝ բուֆետում և ճաշարանում:
- Հետևել դասասենյակի մաքրությանը՝ ըստ նախապես կազմված հերթապահության գրաֆիկի:
- Ստուգել օրագրի, դասագրքերի և տետրերի առկայությունը ըստ դասացուցակի:
- Վերցնել բջջային հեռախոսները:
- Հետևել, որ աշակերտները դասամիջոցներին <u>չբղավեն, չվազեն և չհրմշտեն</u> իրար:
- Հնարավորինս կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

✓ Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում:

✓ Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանց ծնողների հետ:

✓ Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշումներ կայացնել:

✓ Զրուցել անհարգելի բացակայող և հաճախակի ուշացող աշակերտների և նրանց ծնողների հետ:

ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ✓ Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում, խորհուրդներում և ակումբներում:
- ✓ Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին:
- ✓ Ծնողներին տեղեկացնել իրենց երեխաների ստացած գնահատականների մասին:
- ✓ Լսել դասարանի խորհրդի նախագահի հաշվետվությունը:
- ✓ Լավ սովորող աշակերտների միջոցով օգնել թույլ աշակերտներին՝ բարձրացնելու առաջադիմությունը:
- ✓ Կազմակերպել դասարանին հատկացված դպրոցամերձ տարածքի մաքրումը:

ԿԻՍԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ➢ Կիսամյակի ամփոփում:
- ➢ Կիսամյակային հաշվետվության հանձնում:
- ➢ Ծնողական ժողով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ❖ Տարեկան գնահատականների և դաստիարակչական աշխատանքների ամփոփում:
- ❖ Ծնողական ժողով:

- Տարեկան հաշվետվության հանձնում
- Դասագրքերի վերանորոգում և հանձնում գրադարան:
- Դասասենյակի մաքրում և հանձնում:
- Երեխաների ծնողներից տեղեկություններ հավաքել նրանց ամառա-յին հանգստի կազմակերպման մասին:
- Աշակերտական ակտիվի, ծնողների, հնարավոր է նաև զուգահեռ
- դասարանի հետ համատեղ կազմակերպել դասարանի ամառային էքսկուրսիան:
- Լրացնել աշակերտների անձնական գործերը:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Սովորեցնել Աստծո 10 պատվիրանները և ուղղություններ տալ՝ կյանքում դրանք ճիշտ կիրառելու:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ, կազմակերպել տարիքային կինոդիտումներ և ներկայացումների դիտումներ, դրանք քննարկել և վերլուծել:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Անցկացնել զրույցներ հայրենասիրական թեմաներով, սեր արթնացնել դեպի հայրենիքը, ծանոթացնել մեր հերոսներին:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Զրույց՝ «առողջ մարմնում առողջ հոգի» թեմայով: Հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին, համադպրոցական և միջդասարանային սպորտային միջոցառումներին: Աջակցել անցկացնելու Սպորտլանդիա:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Դասարանում պահպանել մաքրություն, կարողանալ գնահատել իր և ընկերոջ կատարած աշխատանքը, պահպանել և անհրաժեշտության դեպքում վերանորոգել գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – Մաքուր պահել շրջակա միջավայրը: Թռչունների համար պատրաստել բներ և այցելել մոտակա այգի: Գարնանը մասնակցել շաբաթօրյակներին և ծառատունկին: Անցկացնել զրույց «Ես սիրում եմ բնությունը» թեմայով:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ – Ապահովել դպրոց-ընտանիք կապը՝ օրագրի միջոցով: Շաբաթվա վերջում ստուգել օրագրերը և նշումներ կատարել: Հանդիպումներ կազմակերպել դասավանդող ուսուցիչների և ծնողների միջև: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել չառաջադիմող աշակերտներին և կապ պահպանել նրանց ծնողների հետ:

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

N	Թեմա	Կատարող Անձ	Կատարման ժամկետը	Նշումներ
1.	Գիտելիքի և դպրության օր	Դասղեկ, աշակերտ	01.09.23	Տեսանյութ
2.	Մաքուր միջավայր, հիգիենայի կանոնները	Դասղեկ, աշակերտ	10.09.23	Տեսանյութ
3.	Ով է իսկական ընկերը, իմ իդեալը	Դասղեկ, աշակերտ		Տեսանյութի դիտում
4.	Մարդկային արժանիքներ, Ինչպիսին պետք է լինեն առաջնորդները	Դասղեկ, աշակերտ.	17.09.23	Learning Apps-ի խաղերի միջոցով
5.	‹‹Ես անկախ եմ ›› - 32 ամյակին նվիրված, Պետական խորհրդանիշներ	Դասղեկ, աշակերտ.	24.09.23	Սահիկահանդեսի ցուցադրություն

6.	Ինչին կարող է հանգեցնել կախվածությունը: Դրանից ազատման ուղիները:	Դասղեկ, աշակերտ	*01.10. 23*	Զրույցի մեթոդ
7.	Իրավունքներ և պարտականություններ	Դասղեկ, աշակերտ	*08.10. 23*	Learning Apps-ի խաղերի միջոցով
8.	Ինչպես չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը	Դասղեկ, աշակերտ	*15.10.23*	Զրույցի մեթոդ
9.	Անհանդուրժողականության դրսևորումներ, պատճառները	Դասղեկ, աշակերտ	*22.10.23*	Տեսանյութեր
10.	Սպորտաձևեր, թիմային աշխատանքը՝ որպես հաղթանակի գրավական	Դասղեկ, աշակերտ	*05.11.23*	Տեսանյութեր
11.	Դավիթ Սարապյան	Դասղեկ, աշակերտ	*12.11.23*	«Մեր մեծերը» ֆիլմի ցուցադրություն
12.	Սովորում ենք պատրաստել ինտերակտիվ համակարգչային խաղեր	Դասղեկ, աշակերտ	*19.11.23*	Quizziz և LearningApps ծրագրերի միջոցով
13.	Հայտնի մարդկանց կյանքի պատմություններից	Դասղեկ, աշակերտ	*26.11.23*	Սահիկահանդես
14.	Պլանավորում, առաջխաղացում	Դասղեկ, Աշակերտ	*03.12.23*	Սահիկահանդես
15.	Առողջ սնունդ, առողջ ապրելակերպ	Դասղեկ	*10.12.23*	Սահիկահանդես
16.	Վերամշակվող և չվերամշակվող թափոններ	Դասղեկ	*17.12.23*	«Էկո աղբ» ՀԿ Հռիփսի Մկրտչյան
17.	Ամանորը տարբեր ազգերի մոտ	Դասղեկ, աշակերտ	*23.12.23*	Տեսանյութեր
18.	Հայկական ծեսեր և ծիսակատարություններ	Դասղեկ, աշակերտ	*14.01.23*	Տեսանյութեր

19.	Հայկական բանակի անցած ուղին: Մեր հերոսները:	Դասղեկ, աշակերտ	*21.01.24*	Տեսանյութեր
20.	Դավիթ Սարապյան	Դասղեկ, աշակերտ	*04.02.24*	Ֆիլմի ցուցադրություն
21.	Ի՞նչպես կարող եմ օգտակար լինել իմ երկրին, իմ դպրոցին և ծնողներին	Դասղեկ, աշակերտ	*11.02.24*	Տեսանյութի ցուցադրություն
22.	Ես իմ երկրի քաղաքացին եմ	Դասղեկ, աշակերտ	*18.02.23*	Տեսանյութի ցուցադրություն
23.	Գիրք և ընթերցանություն	Դասղեկ աշակերտ	*25.02.24*	Զրույցի մեթոդ
24.	Երազանք, թե՞ նպատակ	Դասղեկ, աշակերտ	*04.03.24*	Զրույցի մեթոդ
25.	Նոբելյան մրցանակ	Դասղեկ, աշակերտ	*11.03.24*	Սահիկահանդես
26.	Միջազգային կազմակերպություններ	Դասղեկ, աշակերտ	*18.03.24*	Տեսանյութի ցուցադրություն
27.	Վնասակար սովորություններ Ինչպես ազատվել դրանցից	Դասղեկ, աշակերտ	*01.04.24*	Տեսանյութի ցուցադրություն
28.	Գիտելիք և փորձ	Դասղեկ, աշակերտ	*08.04.24*	Զրույցի մեթոդ
29.	Ինչպես ապացուցել սեփական ճշմարտացիությունը	Դասղեկ, աշակերտ	*15.04.24*	Զրույցի մեթոդ, տեսանյութի դիտում

30.	Ճանապարհորդություն, աշխարհի խոշորագույն պետությունները	Դասղեկ, աշակերտ	*22.04.24*	Զրույցի մեթոդ
31.	Մասնագիտական կողմնորոշում	Դասղեկ, աշակերտ	*29.04.24*	Տեսանյութի ցուցադրություն

32.	Մովսես Խորենացի	Դասղեկ, աշակերտ	*06.05.24*	Տեսանյութի ցուցադրություն
33.	Իմ սիրած գրական հերոսը	Դասղեկ, աշակերտ	*13.05.24*	Զրույցի մեթոդ
34.	Իմ ձեռքբերումները այս ուստարում	Դասղեկ, աշակերտ	*20.05.24*	Զրույցի մեթոդ